ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 5-ը և 7-ը, ուրբաթ և կիրակի օրերը, հոգևոր ուրախության և մխիթարության օրեր եղան Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր դասի և հավատացյալների համար: Ուրբաթ և կիրակի օրերին, ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացավ հոգևոր ճեմարանի շրջանավարտ բարեշնորհ Սամվել սարկավագ Դանիելյանը:

Ուրախությամբ նշենք այն փաստը, որ սույն ձեռնադրությունը Տ. Գարեգին սրբազանի անդրանիկ քահանական ձեռնադրությունն էր: Եվ առաջ անցնելով ասենք, որ ձեռնադրիչ սրբազան հոր կողմից նորընծային տրվեց Տ. Ավետիս հոգևոր անունը՝ ոլպես նշան անդրանիկ քահանայական ձեռնադրության:

Սեպտեմբերի 5-ին, ուրբաթ օրը, երեկոյան, կատարվեց բարեշնորհ Սամվել սրկ. Դանիելյանի «Կոչումն քահանայութեան» արարողությունը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Արարողության խարտավիլակ Տ. Արամ ավագ քահանա Բոյաջյանը վկայեց նորընծայի հոգևոր-իմացական պատրաստակամության մասին:

Կոչման արարողության ավարտին բարեշնորհ սարկավագը հրապարակորեն արտասանեց Գրիգոր Տաթևացու սահմանած Հայաստանյայց Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Սեպտեմբերի 7-ին, կիրակի օրը, ս. պատարագի արարողության ընթացքին, Ս. Սարգիս եկեղեցու խնկաբույր կամարների ներքո պատարագիչ սրբազանը՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, ձեռքը դնելով նորընծայի վրա, արտասանեց ձեռնադրության խորհրդավոր աղոթքը:

Ձեռնադրիչ սրբազան հայրը օրհնությամբ և աղոթքով նորընծային շնորհեց քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ:

Օծման խորհրդավոր արարողության պահին, ձեռնադրող սրբազան հայրը ս. մեռոնով օծեց նորընծայի ճակատն ու ձեռքերը վերանվանելով հոգևոր նոր անունով:

Նորընծա Տ. Ավետիս քահանան ս. խորանից ժողովրդին տվեց իր անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ձեռնադրության և օծման արարողությունից հետո ձեռնադրիչ Տ. Գարեգին սրբազանը ի շնորհավորումն նորընծայի խոսեց

Մի պահ ձեռնադրությունից

ոգեշունչ խրատական քարոզ՝ նշելով ձեռնադրվողի հոգևոր ծարավը՝ ծառայելու Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին, պատրաստակամությունը՝ լինելու քաջ հովիվ և մխիթարիչ հավատացյալ ժողովրդի:

Հավարտ ս. պատարագի նորընծային շնորհավորեցին «քահանայք և սարկաւագք», ինչպես նաև ս. պատարագին ներկա գտնվող բազմաթիվ հավատացյալներ:

Տ. ԱՎԵՏԻՍ ՔԱՀԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ծնվել է 1961 թվականի նոյեմբերի 12-ին Երևան քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Երևանի Շիրվանզադեի անվան հմր. 21 միջնակարգ դպրոցում: 1979 թվականին ավարտելով դպրոցը, ընդունվել է Երևանի հմր. 9 Պրոֆտեխնիկական ուսումնարան:

1980—1985 թթ. ընդունվել և ավարտել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը:

1984 թվականի դեկտեմբերի 25-ին Մայր տաճարում, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի, ստացել է սարկավագական աստիճան:

1986 թ. մարտի 13-ին Տ. Ավետիս քահանա Դանիելյանը հոգևոր ճեմարանի հարկի տակ փայլուն հաջողությամբ հանդես է եկել իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ՝ ներկայացնելով «Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» դավանաբանական-ջատագովական աշխատությունը:

Սույն թվականի սեպտեմբերի 7-ին, ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, ստացավ քահանայական կոչում՝ նշանակվելով ծառայության Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում:

Տ. Ավետիս քահանան երիտասարդ, խոստումնալից հոգևորականներից է՝ օժտված գրական ձիրքով:

Տ. Ավետիս քահանան իր կանոնական-ավանդական քառասունքը կանցկացնի Մայր Աթոռի խաղաղ մթնոլորտում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծային և հույս հայտնում, որ նա միշտ եռանդով ու նվիրվածությամբ իր ուժերը ի սպաս կդնի Հայ Եկեղեցու բարգավաճման շնորհակալ գործին:

ԹՂԹԱԿԻՑ